

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի հայցորդ Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի
<<Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների
քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը>> վերտառությամբ
ատենախոսության վերաբերյալ

Արդի սոցիալ-քաղաքական իրավիճակում հանցավորության դեմ պայքարի ընդհանուր միջոցառումներից բացի անհրաժեշտ է մշակել ժամանակակից մոտեցումներին ու միջազգային փորձին համապատասխան քրեական պատիժների կատարման կազմակերպարավական հիմքեր, ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ: Այս համատեքստում հատուկ տեղ են զբաղեցնում իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց նկատմամբ նշանակված պատիժների կատարումը և դրա արդյունավետության բարձրացումը, որի կարևորությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Քրեակատարողական օրենսդրությունը և դրա կիրառումը հանցավորության դեմ պայքարի և դրա վիճակի ու զարգացման նկատմամբ վերահսկողության գործուն միջոց է: Ներկա ժամանակաշրջանում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր քաղաքականության համատեքստում իրավապահ մարմինների նախկին աշխատակիցների հանցավորության հիմնահարցերը և դրա վրա ազդելու քրեակատարողական կառուցակարգերը ձեռք են բերում հրատապ նշանակություն:

Աշխատանքում շատ ճիշտ է նկատվել, որ համաշխարհային փորձի մեթոդաբանական նշանակության պայմաններում, երբ եվրոպական երկրներում չկան իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների անջատ պահելու կարգ և հատուկ քրեակատարողական հիմնարկներ, հնարավոր են առաջարկներ՝ վերացնել դրանք մեր երկրում: Այս հարցը հնարավոր չէ լուծել առանց հարցի զարգացման պատմական պայմանների ու փոփոխությունների իմացության, երկրի կոնկրետությունների, հանցավոր ենթամշակույթի հետ անխզելի կապի:

Բացի այդ, սույն թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա որոշակի պատկեր կազմել ՀՀ-ում գործող քրեակատարողական հիմնարկներում, մասնավորապես՝ <<Վարդաշեն>> ՔԿ-ում տիրող վիճակի, մթնոլորտի, ինչպես նաև վարչատեխնիկական

անձնակազմի աշխատանքի թերացումների վերաբերյալ:

Նման պարագայում, ընտրված թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը, կարևորությունը, հրատապությունն ու արդիականությունը կասկած չի հարուցում:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասներկու ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվել է պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլխում՝ «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ անձի հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության ու օրենսդրության համակարգում» հեղինակը քննարկում է այս ինստիտուտի հասկացությունը, ազատագրվածների դատապարտվածների դասակարգումը և անջատ պահելու օբյեկտիվ գործոնները:

Հեղինակի կողմից նշվել է, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից «դատապարտյալի անձի» հասկացության վերաբերյալ գիտնականների շրջանում, ըստ էության, առկա չէ ձևավորված միասնական կարծիք, այնուամենայնիվ, շատ գովելի է, որ հեղինակի կողմից փորձ է կատարվել ներկայացնել քննարկվող հասկացության վերաբերյալ իր իսկ տարբերակը:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը հանգամանալից քննարկել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատագրվածների դատապարտվածների անձի բնութագիրը և տարրերը, ինչպես նաև մանրամասն ներկայացրել է հիշյալ անձանց սոցիալ-ժողովրդագրական և քրեաիրավական բնութագրերը:

Աշխատանքի երրորդ գլխում ներկայացվել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի իրավական վիճակի հիմնահարցերը, քրեակատարողական բնութագրի տարրերի վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև՝ ազատագրված կրման պայմանները: Բացի այդ, խոսվել է նաև

կարգապահական ներգործության ու վերասոցիալականացման հիմնահարցերի, միջավայրի և արտաքին սոցիալական կապերի մասին, ինչպես նաև՝ անդրադարձ է կատարվել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործունեությանը:

Պետք է նշել, որ իր տեսակով յուրահատուկ (սպեցիֆիկ) թեմայի ընտրված լինելու պայմաններում՝ հեղինակին հաջողվել է ինքնուրույն, խորը, բովանդակալից աշխատանք ներկայացնել, ինչի արդյունքում էլ հստակեցումներ մտցնել և նաև արժեքավոր առաջարկներ կատարել մի շարք խնդրահարույց իրավիճակների շուրջ: Ընդ որում, հեղինակի կողմից երկրորդ և երրորդ գլուխներում առաջ քաշված թեմաների շուրջ ուսումնասիրությունը կատարվել է նաև վիճակագրական թվերի տեսքով, ինչպես նաև՝ անմիջական <<Վարդաշեն>> ՔԿ-ում իրականացված հարցման միջոցով:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթում նշվել է, որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից ազատազրկման դատապարտվածների հանցագործությունների տեսակների քանակական հարաբերակցության վերլուծությունից երևում է, որ այդ խմբից ազատազրկման դատապարտվածների կեսը կատարել է կյանքի և առողջության, բնակչության առողջության դեմ ուղղված հանցանքներ, ինչը մտահոգիչ է, հատկապես, եթե նկատի ունենանք, որ նրանցից նախկինում դատապարտվածների հանցագործությունների մեջ գերակշռում էին կյանքի ու առողջության, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված հանցանքները: Այս փաստն արդեն իսկ վկայում է հանցավորության կառուցվածքի կայուն միտում. նախկինում կատարած նույնաբնույթ հանցագործությունները վերարտադրվում են:

Արդյունքում՝ հեղինակը տեսակետ է առաջ քաշել, որ անհրաժեշտ է սահմանափակել կամ իսպառ արգելել նախկինում հանցագործություն կատարած անձանց ծառայության հնարավորություններն իրավապահ ոլորտում:

Արդարացիորեն հասկանալի է իրավապահ համակարգում աշխատանքի անցնելու շուրջ հեղինակի մտահոգությունները, սակայն կարծում ենք, որ հիշյալ հարցի քննարկումը կարող էր իրականացվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համատեքստում, մասնավորապես՝ իրավապահ համակարգում անցնելու հնարավոր սահմանափակման տեսանկյունից: Եվ շատ ավելի հետաքրքիր կլիներ հասկանալ հեղինակի մոտեցումն այն հարցի շուրջ, թե արդյոք դատվածության մարման փաստով

պետք է վերանա բոլոր իրավական հետևանքները, այդ թվում նաև իրավապահ համակարգում աշխատանքի անցնելու հետ կապված: Ընդ որում, ուշագրավ է, որ ի տարբերություն գործող օրենսգրքի՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 98-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով դատվածության վերացումը հանգեցնում է դատվածության հետ կապված բոլոր իրավական հետևանքների վերացման, այդ թվում՝ ենթադրվում է նաև իրավապահ մարմնում աշխատանքի անցնելու առումով:

2. Աշխատանքի 30-րդ էջում դատապարտյալներին միայնցից անջատ պահելու հարցի շուրջ ծավալված քննարկման շրջանակներում տարբերակ է առաջարկվել, որ ճիշտ է օգտագործել <<աշխատակից>> հասկացությունը, որը ներառում է և աշխատանքային (ծառայողական) իրավունքի իմաստով աշխատողներին, և քաղաքացիական պայմանագրով աշխատանք կատարողներին: Բացի այդ, հեղինակի կարծիքով վերը նշված դատապարտյալներին անջատ պահելու հետ միասին ՔԿՀ-ում անջատ պահվելու իրավունք ունեն նաև նրանց ընտանիքի անդամները:

Գտնում ենք, որ վերը նշված տարբերակում մի փոքր մակերեսորեն է խոսվում և անհասկանալի է նախ քաղաքացիական պայմանագրով աշխատողներին ևս անջատ պահելու հիմնավորվածությունն ինչով է պայմանավորված, օրինակ՝ ոստիկանության գրասենյակային մասնագետին ՔԿ հիմնարկում մյուս դատապարտյալներից անջատ պահելու առումով: Եվ երկրորդ՝ խորությամբ չի ներկայացվում իրավապահ մարմնի աշխատակցի ընտանիքի անդամներին ևս անջատ պահելու հանգամանքի անհրաժեշտության մասին, հատկապես՝ ինչպես պետք է դա կատարվի, արդյոք ունենք այդպիսի հնարավորություն (այդ թվում՝ նյութական, շենքային պայմաններ և այլն), թե ոչ և դրա վերաբերյալ ինչպիսի լուծումներ կան:

3. Թեև հեղինակի կողմից աշխատության ողջ ընթացքում մանրամասն ներկայացվել, քննարկվել և վերլուծվել է թեմայի վերաբերյալ մի շարք հարցեր, կատարվել են վիճակագրական հետազոտություններ, այնուամենայնիվ, գիտական աշխատանքն էլ ավելի արժեքավոր կլիներ, եթե այդ ուսումնասիրությունների գոնե մի մասն իրականացվեր արտասահմանյան երկրների փորձը հետազոտելու, հաշվի առնելու և առաջարկներ ներառելու տեսանկյունից: Կարծում ենք հետաքրքիր կլիներ իմանալ, թե եվրոպական երկրներում և/կամ ԱՄՆ-ում ինչպիսի կարգավորումներ կան հատկապես

դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու առումով, արդյոք՝ այնտեղ տարանջատվում է իրավապահ համակարգում նախկինում աշխատած դատապարտյալը մյուսներից: Նման տարանջատման դեպքում՝ ինչպես է դա կազմակերպվում և իրականացվում, իսկ եթե նման տարանջատում չկա, ապա ինչով է դա հիմնականում պայմանավորված, այդ դեպքում արդյոք պատժի կրման ընթացքում բացասական հետևանքներ լինում են և ինչպես է դա կազմակերպում:

Այնուհանդերձ, իմ կարծիքով նշված թերությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Դավիթ Հակոբի Զիլֆիմյանի <<Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը>> վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈւՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող՝

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր

Ա.Հ.Հովհաննիսյան

Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
Ա.Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ,
իրավ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր



Հ.Մ.Խաչիկյան